ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

03 դեկտեմբերի 2020թ
ք. Եղեգնաձոր

ՈՐՈՇՈՒՄ N 106

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍՊ/15.2/33599-2020 հանձնարարականը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզում 2021թ. հունվարի մեկի դրությամբ առկա, հունվարի մեկից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին և անասնաբույժին:
3. Անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետներում:

Недействительная подпись

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2020 թվականի
դեկտեմբերի 03-ի N106 որոշում

2021թ հունվարի 1-ից մինչև 18-ը ընկած ժամանակահատվածում մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում հունվարի 1-ի դրությամբ անցկացվող գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու համար և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը.

1. Մարգարյան Գեղամ - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
2. Ղազարյան Սևակ - ՀՀ Վիճակագրական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
3. Հարությունյան Աղվան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
4. Խաչատրյան Գոհար - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ
5. Թունյան Աշոտ - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության ավագ մասնագետ
6. Ավագյան Հովիկ - ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ
7. Հարությունյան Անի - <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Եղեգնաձորի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/
8. Իխտիարյան Հովհաննես - <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզի գլխավոր համաճարակաբան համաճարակաբան /համաձայնությամբ/
9. Բաբայան Նարինե - ՀՀ էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության Վայոց ձորի մարզային բաժնի պետ /համաձայնությամբ/